ՕՐԷ ՅՕՐ

(ԵՍԵՄԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

1891 թ. Սեպտեմբերի 1.

«Մուրճ»-ի խմբագիրը հրաւիրեց ինձ իւր մօտ և առաջարկեց դառնալ «Մուրճ»-ի մշտական աշխատակից։ Ընդ ոմին նա ինձ նուիրեց մի էլեքտրական լապտեր՝ հայ կեանքի թէ հրապարակները թէ քունջ ու պուճաղները լուսաւորելու համար և մի հատ պողպատեայ մուրճ՝ ինձ վերապահելով սորա գործածութիւնը։

Եւ ես, ահա, «Մուրճ»-ի դինուած աշխատակից, մինչդեռ մտադիր էի ինքս սեպհական մի լրագիր՝ «Ֆէլիէտոն» կամ «Դոլմա» անունով հաստատելու։ Այդպիսի մի լրագրի հրատարակութիւնը ինձ դալթակղեցնում էր դրան խմբագրելու վերին աստիճանի հնչտութիւնը։ Իմ հակառակորդների հետ ես չէի մտնիլ ոչ տրամաբանական և ոչ աստուածաբանական բանակռիւների մէջ։ Իմ ոչ-բարեկամներին մասխարալ կանէի, իսկ իմ թշնամիներիս ծաղր ու հանաքով կը պատասխանէի։ Եթէ պատահէր լսել ու կարդալ ինձ համար դժուարհասկանալի մի միտք, ում և է մտքի վեհ թռիչքներ՝ ես կը համեմէի այդպիսիները ծաղրաշարժ խօսքերով ամբոխի ծաղրածութիւնները և ծիծաղը լսելու համար, թէկուզ արածս խղճի դէմ էլ լինի—իսմ չէ կարելի միշտ ձեռքերը սրտի վրայ դրած խօսել։

Նիւթի պակասած ժամանակը պատմական երկար քննադատութիւններ կը թարգմանէի, արևմտած Արևելքից ամբողջ սիւներ կարտատպէի և անծայր ու ձիգ պատմա-կենսագրական նիւթեր կը դետեղէի լրագրիս մէջ հանդերձ պատմական դոկումենտներով։

Սակայն նոր պաշտօնս լանձն առնելով՝ ես խոստանում եմ «Մուրճ»-ի խմբագրին և ընթերցողներին լինել անաչառ և անկողմնապահ։ Թէև իսկն ասած՝ չեմ հասկանում այդ ինչպէս եմ անելու—միայն լռելը կը լինի անկողմնապահութիւն. իսկ եթէ ես խօսում եմ՝ մի դատ, մի անձնասորութիւն, մի կարծիք պաշտպանելով՝ չէ՞ որ ես կողմնապահութիւն եմ անում։ Իմ մեղքս չի լինիլ, ուրեմն, եթէ ես անկողմնապահ լինել ցանկանալով հանդերձ՝ դառնամ կողմնապահ։

1891 թ. Սեպտեմբերի 2.

Ինձ ծանօթացրին «Մուրճ»-ի ապագայ հրատարակչի հետ։ Նա նրան նկատեցի մեր լրագրութեան մի մասի գուշակութիւնները նորա կաչու գործարանի աջողութեան վերաբերմամբ։

Նա ինձ պատասխանեց՝ տեսնենք—եթէ կարողանանք մեր գործարանից դուրս բերել այնպիսի подошва-ներ, որոնց հաստապնդութիւնը հաւասար լինի մեր մի քանի գործիչների երեսի հաստապնդութեան—մեր աջողութիւնը ապահոված կը լինի և ոչ մի արտասահմանեան ֆիրմայից անգամ երկիւղ չը պիտի ունենանք։

1891 թ. Սեպտեմբերի 5.

Այսօր եղաւ առաջին հայ ներկայացումը։ Տիկ. Սիրանուշի դէբիւտի համար խաղում էին Հանրի VIII։ Բոլոր օթեակները փայլում էին դատարկութեամբ։

Առաջին գործողութիւնից յետոյ, երբ դեռ ա. Սիրանուշը չէր երևացել բեմի վրայ, թատրոնի այգում պատահեցի իմ ծանօթ օրիորդներից մէկին։ Սովորական ողջունից յետոյ՝

—Շատ ժամանակ է որ վերադարձել էք քաղաք, հարցրի ես, և ամարանոցից յետոյ ինչպէս էք գտնում քաղաքը։

—Ոչինչ, պատասխանեց օրիորդը։

—Եթէ չեմ սխալւում, դուք Բորժոմ էիք և շատ ուրախ անցկացրած կը լինիք շոգերի սեզոնը—եղանակը հիանալի էր այս ամառ և հասարակութիւնը բաղմամարդ։

—Ո՛չինչ։

—Անհանգստութիւն չէր պատճառում ձեզ երկաթուղու անճշտութիւնը. առհասարակ աջողակ ճանապարհորդութիւն ունեցաք։

—Ոչինչ։

—Ի՞նչպէս հաւանեցիք առաջին գործողութիւնը. տեսաք ինչպէս էր, լաւ էր...

—Ոչինչ։

Մի կողմից գրեթէ վստահ, որ միւս հարցերիս էլ այս զոհացուցիչ պատասխանը պիտի ընդունեմ—միւս կողմից վախենալով մի գուցէ ծանօթ օրիորդս պատկանում լինի «ոչինչականներին»՝—ես փախաչ թատրոնի դահլիճը։

Երկրորդ գործողութեան մէջ ես տեսայ և լսեցի առաջին անգամ տ. Սիրանուշին։ Ի՞նչ սիրուն շարժուածքներ, ինչ անուշ լեզու և ինչ դուրեկան ձայն։

1891 թ. Սեպտեմբերի 6.

Ռուս թատրոնի այս տարուայ բէպէրտուարը հրատարակուած է տեղական ռուս թերթերում։ Ահա այն՝ բաղկացած 13 պիեսներից՝

Елизавета, королева англійская, Маріонъ де Лормъ и Рогнѣда, въ неравной борьбѣ за женскій вопросъ, чрезъ пороги къ счастью въ меблированныхъ комнатахъ . Уголокъ Москвы· нашли первую любовь въ жизни Илимова, Эрнани, Руи Блаза и др., но собака садовника...

Հանաք չը կարէք, ընթերցող՝ սրանք մի-մի վերնագրեր են։

1891 թ. Սեպտեմբերի 13.

Երեկ Երևկուան Թուրեանի առաջին դէբիւտին՝ թատրոնի մի մասը և բոլոր օթեակները զարձեալ դատարկ էին։ Դեռ ժամանակ շատ ունինք, առում են անվրդով հայ կանայք և օրիորդները՝ սպասելով որ աշունքայ տարաղը լայնի և իրանց շորերը պատրաստ լինեն։

Օհ, լանձնաժողով, մասնաժողով և վեհաժողով—Ով Արարիչ [1])։

Փորձած դերասանից պէտք է և աւելի պահանջող լինել, և ես ասում եմ որ Թուրեանի չիոթութիւնը «Դոն-Դրիդորիօի» մէջ պէտք է դարդանայ cres-cendo—մինչդեռ հէնց առաջին գործողութեան մէջ նորա չիոթութիւնը գաղաթնակէտին էր հասել։ Իսկ «Պոն-Պարդոնի պանդոկում» տիկին Մելիքեանը իրաւունք ունէր մի իսկական ջահելի սիրել։

1891 թ. Սեպտեմբերի 15.

Դնա մեռիր - արի սիրեմ՝ ասած է մեր հեղինակների համար էլ։

Ե. Պարոնեանի մեռնելուց յետոյ մենք դնահատում ենք նրան և ինդրում նորա գրուածները։ Այս օրերը միայն ձեռքս ընկաւ նորա «Մեծապատիւ մուրացկանները» Թիֆլ. հպերէն գրքերի Հրատ. Ընկեր. հրատարակութիւնը։

Եթէ ընթերցողը սիրում է սրտանց ծիծաղել, թող ձեռք բերի այդ գիրքը մի կուշտ ծիծաղելու համար, ինչպէս որ այդ ինձ պատահեց գրքի սկզբից մինչև ծայրը կարդալու ժամանակ։

Գաւառից Պոլիս եկած Աբիսողոմ աղալին հերթով ներկայանում են՝ հայ խմբագիրը, հ. քահանան, հ. բանաստեղծը, հ. փաստաբանը, հ. բժիշկը, հ. պատկերահանը, հ. սափրիչը, հ. մոցիքուլը և ալն և ալն և մուրացկանութիւն անում։ Հայ խմբագիրը առաջարկում է իւր լրագրից 15 №

---

[1]) Իմ փոխադրութիւնը է հայս՝ О, коммисія о создатель! որ և նեիրում եմ հայ թարգմանիչներին։

միանգամ և խնդրում պաշտպանութիւն, հ. բանաստեղծը խնդրում է տալ իւր ճառերը և ասանաւորները, հ. փաստաբանը աշխատում է մի վէճ սարքել և իրան համար մի գործ ստեղծել, հ. բժիշկը գանգատւում է իւրա-վիններին անտարբերութեան վերայ և մեղադրում օտարազգի բժիշկներին դիմելը և այլն և այլն։ Ի՞նչքան ծիծաղ, բայց և որքան դառնութիւն այդ տեսարանների մէջ։ Թէև «Մուրճ»-ի դրախօսը ակնարկում է չափազանցութիւնների մասին՝ ես կը լիշեցնեմ որ նոյն իսկ Գոգոլի «Մեռած հոգիները» կամ Սերւանտէսի Դոնկիխոտը զուրկ չեն այդ պակասութիւնից։

1891 թ. Սեպտեմբերի 23.

Այսօր «Արձագանք»-ը տպել է մի ազդ, որով խոստանում է լրացնել մեզ տարւայ վերջը պարտաւորեալ 52 №№-ը։ Իսկ ուր մնաց 1890 թ. բաժանորդներին խոստացած՝ զուտ բելլետրիստական բովանդակութիւն ունեցող գիրքը։ Այդ երկու խոստումներից [1]) որն էր կամ է լրագրական ֆորտէլ։

1891 թ. Սեպտեմբերի 25.

—Ի՞նչպէս հաւանեցիք ֆրանսիական ցուցահանդէսը Մոսկւայում—հարցնում էի ես անցեալները մի ծանօթ վաճառականի։

—Կար էլի։

—Իսկ գոլնգոլն շատրւանները։

—Շատ լաւ էին, միայն չ'իմացայ թէ ինչպէս էին նրանց գոլն տալիս. լեզու հասկացող պէտք է՝ անլեզու ինչ կարելի է իմանալ։

—Ուրիշ ինչ հաւանեցիք։

—Վաֆլի շինող մաշինան. հատը 20 կոպէկով օրական 800—1000 ռ. վաֆլի են շինում ծախում. դէ վաֆլի ամենքն էլ են պատրաստում, բայց թէ դրանց շինածը աւելի նուրբ ու բարակ է՝ էդ էր պատճառը, թէ ծախողները ֆրանցուժենկաներն էին—չիմացայ։

—Լաւերն էին։

—Տեղովը մին՝ ոսկի են—ոսկի. մարդ էդպէս կնիկ ունենայ՝ էլ ապրանքը մաղազինում կը փաթ, կամ նիսիա կը կորչի՝ մէկին հազար կ'աշխատի։ Ոչ թէ մեր կանայքը՝ էս տուր ու էն տուր, էս առայ ու էն առայ—վայլահ, ինչ հաշիս կը դար, դախլումը նստես ու փողերը մոդ անես։

Ամենահետ ծանօթս պատմեց կապովի օդապարիկի և ռուս ազգերի

---

[1]) Խոստանալ նշանակում է բառգրքի համաձայն խօսք տալ։ Բայց թէ տուած խօսքը պէտք է կատարել՝ այդ կը լինի ժողովրդական հասկացողութիւն, և կարելի է չը կատարել՝ այդ կը լինի ակադէմիական ըմբռնում։

մասին, որոնք նմանապէս խելքից էին հանել հասարակութիւնը։ Նա համոզեցաւ որ հայ վաճառականը միայն ձեռնտու բաներին է լաւ ասում։

Նա պատահեցի նմանապէս մի հայ օրիորդի և մի ուսանողի, որոնք նոր էին վերադարձել Մոսկուայից, և երկուսին էլ հարցեր առաջարկեցի ցուցահանդէսի մասին։

Նէ պատասխանեց՝ ինչ որ կը պատասխանէր Եւրոպի թռուներից ամեն մէկը՝ ամենահետաքրքրականները ակնեղէններն էին—ուրիշ աչքի ընկնող բան չը կար բացի 2—3 թանգագին հագուստից։

Իսկ երիտասարդը գովեց պատկերների բաժինը և մի քանիսը աքանչելի գտած լինելով՝ մանրամասնութեան մէջ էր մտնում...

1891 թ. Սեպտեմբերի 26.

Ինչքան բախտաւոր էք դուք, գաւառացի ընթերցող։ Թիֆլիսում այժմ փայտի սէզոն է. ուզում եմ ասել ձմեռուայ համար փայտի պաշար առնելու ժամանակ է։ Առաւօտուայ 6 ժամից սենեակիս մէջ լսում են վայրենի աղաղակներ, վայրենի թուրքերի և զանազան լեռնցիների. նրանք գոռում գոչում են իրար վրայ, մուշտարիների վրայ և ամենի վրայ։ Բախտաւոր է նա՝ ով դրացի չունի—այսօրուայ տեսարանը դեռ մէկ դրացունս էր։ Մինթէ ժամանակ չէ մտցնել քարածուխի գործածութիւնը տնային տնտեսութեան մէջ։

Գիտէք, ընթերցող, ում անունը անբաժան է քարածուխից։ Ո՞ր հրապարակախօսն է նպաստել քարածուխի շահագործութեանը մեզանում։

—Պր. Նիկոլաձէ։

Իւր հիմնած և ձեռք բերած երկու ռուս լրագրերում նա արծարծում էր գլխաւորապէս քարածուխի հարցը։ Նա հրատարակում էր իւր ճանապարհորդութիւնները, իւր այցելութիւնները ֆրանսիացի մինիստրներին և դրամատէրերին, ապացուցանում էր քարածուխի հանքի անհաշուելի հարստութիւնը, օժանդակ երկաթուղիների անհրաժեշտութիւնը, նաւթի պակասելը ներկայում և ապագայում և այլն և այլն. այնքան աշխատեց որ վերջ ի վերջոյ գլուխ բերեց 1.200,000 ռ. մի ընկերութիւն հայերի աջակցութեամբ (և կան միամիտներ՝ որոնք կարծում են թէ հայերը ոչինչ բանի պէտք չեն). բայց հէնց որ Նախչիրի քարածուխի ընկերութիւնը հաստատուեց և ընտրուեցան դիրեկտորներ, կառավարիչներ, հաշուապահներ և այլն, հէնց որ ակցիաները բաժանուեցան—պր. Նիկոլաձէն չը սպասելով նոյն իսկ տարուայ վերջին՝ ծախեց իւր լրագիրը։

—Ի՞նչու։ Ով գիտէ՝ գուցէ հէնց հիմայ քարածուխ դառած паспортникъ-ի վրայ հանգստանալով՝ մտածում է մի նոր ընկերութիւն կազմակերպելու։

1891 թ. Սեպտեմբերի 28.

Ձեր ձեռքը ընկել է Վիեննայի Մխիթարեան տպարանից լոյս տեսնող, տարեկան 10 ֆր. կամ 4 ռ. արժեցող՝ բարոյական, ուսումնական և արուեստագիտական «Հանդէս Ամսօրեայ»։

Գուցէ պատուելի միաբանութիւնը ի նկատի ունէր բարոլագիտութիւնը, որովհետև բարոլական լինել չէ՞ որ պարտական է ամեն մի թերթ և ամսագիր։ Զը նայելով բարոլականի առաջ դնելուն՝ այդ բաժինը (իմմիվիպականը) 4—5 երես է բռնում. արուեստագիտականը աւելի քիչ՝ 1—2 երես. բացի դրանից քաղաքական տեսութիւնը 1—2 երես ու այլ և այլ նորալուրք՝ 1—3 երես. ուսումնական մասին մնում է 20—25 երես, որ ասել է թէ այս ամսագիրը գլխաւորապէս ուսումնական է և, իմ համեստ կարծիքով, այդ նեղ չրջանակի մէջ մնալով՝ նա կարող էր լինել լուրջ և գուտգիտնական ամսաթերթ հայկաբանութեան նուիրուած։ Սակայն այժմեան ձևը և ծրագիրը նկատելի են կացուցանում, որ պատուելի միաբանութիւնը միտք ունի եղել լարմարուել ընթերցողների մեծամասնութեան ճաշակին և այդպիսով իւր ամսագիրը դարձրել է պուդինգի պէս մի բան։

Մթթէ այդ հարուստ միաբանութիւնը, որի տպարանում տպագրւում են 19 պարբերական հրատարակութիւններ զանազան տեսակի և որն ունի 37 լեզուով (նաև по русскій ըստ բնագրին) տառեր—այդպիսի մեծահարուստ (և ոչ խեղճ Էջմիածնի պէս) միաբանութիւնը չի կարող լատկացնել ընդ միշտ մի գումար, մեր ասածի պէս, մի զուտ գիտնական հրատարակութեան համար։

Ես չը գիտեմ ով ինչի համար, բայց ես ձեռքս եմ առնում այդ ամսագիրը և կարդում միմիայն վերջին երեսը ուր գրւած է լինում մի հունգարերէն թերթի բովանդակութիւնը։

Հայ ընթերցողուհիներից քանիսը դիտեն այդպիսի մի ամսաթերթի գոյութեան մասին։

Աւ, զարմացած ընթերցողուհի, հայերի մասին հունգարերէն լեզուով մի ամսաթերթ։ Ես չեմ կարող երաշխաւորել այդ ամսագրի լաւ խմբագրութեան մասին, (որովհետև երևի ես էլ ձեզ նման հունգարերէն չը գիտեմ), բայց և այնպէս ահա թէկուզ մի համարի բովանդակութիւնը։ Ահա այն՝

Գրիգոր Սեմալեան—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի վարքէն։

Տէր-Անտոն Մոլնարեան—Ազաթանգեղոս հայ պատմագիրը։

Յակոբ Չիլինկարեան—Լրագրապետի մը լսբելեանը։

Տէր Անտոն Մոլնարեան—Գլխաւոր Վարժոց ի Կերլա-Հալաքաղաք։

Խ. Սոնկոդեան—Հայերէն լատինարէն արձանագրութիւնք Կոնստանդնուպոլիս (մեր Գանձակը չը կարծէք!)։

Ռ.—Կարլոս Վ. օտնոլի հայոց վրայ։

Ս. Ֆ.—Մեր պատգամաւորը խորհրդանոցին, մատենագրութեան մէջ ու տանը։

Յակոբ Մարկովիչեան—Խոսրով Ա։

Մանրալուրք՝

Հայ գաղթականութիւնն ի Հնդիկս։

Ագուլիսի հաւերը։

Զարճալի խորտկացուցակ։

Մատենագրութիւն, գեղարուեստ՝

Երաժշտական կտոր լորինող։

Կոստանդինոպոլսոյ լրագիրները։

Տնտեսական կեանք՝

Արեւելեան պարտիզպանութիւն։

Փոքրասիական երկաթուղի։

Ի՞նչ նոր բան կայ հայոց վրայ՝

Գաղթականութիւն Ամերիկա։

Լուսինեան գերդաստանը։

Սորանից երևում է որ այս ամսագրի նպատակն է ծանօթացնել հունգարական հաւերին՝ իրանց անցեալի և ներկայի հետ։

1891 թ. Սեպտեմբերի 30.

Ի՞նչով են զբաղուած «մեր քաղքի» ձայնաւորները։ Զուր մաղելով և ծեծելով։ Դեռ լաւ է եթէ մաքրէր Աւշալայի ջուրը՝ այդ էլ չը կայ։ Շաբաթը մի անգամ հաւաքելով վիճում են անվիճելի բաների մասին։ Ուպրավալի ծառայողներից մին՝ մի ապտակ է տալիս հրապարակօրէն մի ուրիշին և ահա տեղի են ունենում արձակումն, խղճահարութիւն, նորից ընդունելութիւն, անվերջանալի допросъ-ներ, արձանագրութիւններ և այլն, կարծես թէ ձայնաւորները և Ուպրաւան իրանք սկսել է դատաստան կատարեն դատաստան ունեցած երկրում։

Ի դէպ՝ ինչ բանի համար են լատկացնում քաղաքի հրապարակները։ Օտար երկիրներում չը գիտեմ՝ բայց մեր քաղաքում հրապարակների վրա քարեր են կոտրատում և մանրացնում քաղաքային պիտոյքների համար վաղ առաւօտուայ ժամը հնգից կամ վեցից։

Եւ դեռ ասողներ կան որ մեր քաղաքային դուման հոգս չէ տանում քաղաքի բնակիչների առողջապահութեան մասին։ Եթէ իրաւ, այս մտքով դրդուած է անում այդ կարգադրութիւնը, չէ որ աւելի հետևողական պէտքէ լինել և քարեր կոտրատողներ նստացնել նաև բոլոր փողոցների երկարութեամբ և բոլոր տների առաջ, որպէս զի ամենքն էլ օգուտ քաղեն այդ լարմարութիւններից և վաղ զարթնելով՝ արշալուսային պտոյներ անեն առողջապահական կանոնների համեմատ։

1891 թ. Հոկտեմբերի 1.

Այսօր կարդացի որ պ. Մինաս Չերազ իւր չորրորդ դասախօսութիւնը կարդաց Hastings'ում անգլիացի հոծ հասարակութեան առաջ, խօսելով հայերի՝ պատմութեան, կրօնի, լեզուի, գրականութեան և այլ բաների մասին։

Ես հաւատացած եմ որ եթէ պ. պրոֆէսորը նոյն նիւթի մասին կարդար թէ Պոլիսում թէ Թիֆլիզում—ունկնդիրները կը լինէին ինքը և մի քանի հատ իւր բարեկամներից։

1891 թ. Հոկտեմբերի 2.

Թիֆլիզում մատգրութիւն կայ հաստատել հասցէների գրասենեակ (адресный столъ)։ Շատ ժամանակին է. մանաւանդ որ հայ դերասանները այժմ բանի են և վարձես թէ քիչ քիչ մոռանում են իրանց հին և անվարձ պաշտօնը։

Ընթերցողը իղուր է զարմանում. դեռ երէկ՝ եթէ մէկին հարկաւոր էր մի հայի (այն էլ հարուստի) հասցէ իմանալու, դիմում էր դերասանիս Սոքա պարտաւոր էին իմանալ և իմանում էլ էին բոլոր հայերի հասցէները, իբրև տոմսերի ցուցիչներ հայ ներկայացումների համար։

1891 թ. Հոկտեմբերի 3.

Այսօրուայ հայոց ներկայացումը կրկին առիթ է տալիս խօսելու մեր հայերէնագիտութեան մասին։ Ռուսաց առածը каковъ попъ, таковъ и приходъ պէտք է վերածել հայերէնի՝ դերասանին նայիր—ծուխը ճանաչիր։

Մեր դերասանները մեր մէջ և մեր ոսկորից են։

Պ. Թուրեանը մտածում է տաճկերէն և դեր կատարելիս՝ լանկարծ միտն է գալիս տաճկերէն ոճը—նա կ ա ն գ է առնում որպէսզի սխալմամբ հայ բնմի վրա տաճկերէն չ'արտասանի և ապա շարունակում հայերէն թարգմանութիւնը... Իսկ մեր կրիտիկոսները ափսոսալով հաղորդում են իրանց կասկածը Թուրեանի կակազելու մասին։

Օր. Մելիքեանը մտածում է վրացերէն, և դեռ նոր է սկսում ընտելանալ հայ աշխարհաբառին։

Նոյն իսկ պ. Պետրոսեանը մտածում է ռուսերէն։

Հայ լեզուն աղաւաղած, խառնափնթոր մի բան է ներկայանում բեմի վրա։ Այս անճոռնի երևոյթը միայն այն ժամանակ դուցէ վերանայ, երբ մեր դերասանները մայրենի լեզուին կատարելապէս տիրանալու համար՝ նաև կեանքի մէջ խօսեն այդ լեզուով և լրջօրէն հետևեն ամբողջ հայոց գրականութեանը և ոչ միայն իրանց նուիրած մի քանի տողերին։

1891 թ. Հոկտեմբերի 4.

Զարմանք բան. Ով որ հաշիւ պէտք է ներկայացնի, օրինակ մեր ուսումնարանների հոգաբարձուները, երեցփոխները և համալսական գումարներ շահեցնողները—սրանք լռում են և խուլ ձևանում երբ հաշիւ է պահանջում սրանցից.

Իսկ հաշիւ տալիս են ալեպիոները, ումից հաշիւ պահանջող չկայ և իսկի իրաւունք էլ չկայ պահանջելու.

Պ. Երիցեանին անչուշտ լայանի է թէ առաջիների և թէ երկրորդների ցուցակը. Սակայն վերջի տեսակին պատկանողների մի քանիսի անունները ես ինքս լիշում եմ.

Պր. Լ. Տիգրանեանց իւր «Առողջապահական թերթ»-ի մասի հաշիւը ներկայացրեց հասարակութեան, պ. Ա. Յովհաննիսեանը իւր «Փորձ»-ի հաշիւը, պ. Զ. Մսերեանց իւր «Փարոս Հայաստանի»-ի հաշիւը և վերջապէս այսօր նոյնը անում է պ. Ս. Գուլամիրեանցը, Պետերբուրգի «Արաքս»-ի խմբագիր-հրատարակիչը.

Այս բոլորի մէջ մի զանազանութիւն կայ միայն՝ առաջինները հաշիւը աւին և փակեցին, իսկ վերջինս հաշիւ է տալիս շարունակելու լոյսով. Ապրողը կը տեսնի.

Տեսնենք նաև՝ «Մուրճ»-ի ապագայ հրատարակիչը երբ է տալիս իւր մասի հաշիւը. Այդ էլ ի հարկէ միայն ապրողը կը տեսնի.

1891 թ. Հոկտեմբերի 24.

Գուժկան օր. «Արձագանք»-ի գոյութեան միակ աղբիւրը՝ «Արևելք» լրագիրը դադարեցրին անպատման ժամանակով. և այդ բոթաբեր լուրը պարունակող «Արձագանք» ի համարը տեղն ու տեղը կիսուեց (տես նորա № 36).

—Հայ թատրոնի գործը հիանալի է գնում. չորս կողմը թարգմանութիւններ են անում, փոխադրութիւններ են չինում և նոյն իսկ ինքնուրոյն դրամաներ ստեղծում. Բանը այնտեղ է հասել որ նոյն ինքն հնախօս, հնագէտ, հնաբան պ. Երիցեանը լոյս աշխարհ ընծայեց մի արարածով վոդեվիլ-կոմեդիա իւր սիրած հին գրքերի մի վաճառողի կեանքից.